# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 14.07.2023 թվականին կնքված N ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-23/6 ծածկագրով «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի

ք. Երևան «03» 08 2023թ.

«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամը, ի դեմս տնօրեն՝ Գ. Սարգսյանի, ով գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «ԱՐՄՆԱՔ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Մ. Սարգսյան, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 14.07.2023թ-ին կնքված N ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-23/6 ապրանքի մատակարարման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.8 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի Հավելված N2-ի «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ի 1-ին չափաբաժնի մասով «Ժամկետը**» սյունակում նշված «Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 35 օրացուցային օրվա ընթացքում» բառերով:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրովստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**

«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամ
ՀՀ, Դիլիջան քաղաք, Պարզ լճի 5, 24/1 և 26/1
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510023598301[illegible]
ՀՎՀՀ 07619891

տնօրեն — Գ. Սարգսյան
/ստորագրություն/

**ՎԱՃԱՌՈՂ**

«Արմնաք» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Գյուլբենկյան փ. 24շ., 62
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052822101991001
ՀՎՀՀ 00194379

տնօրեն — Մ. Սարգսյան
/ստորագրություն/
Կ.Տ.